



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 փետրվարի 2012թ.

N 59-Ա

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՌՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1030-Ն որոշման 17-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեով նախատեսված անտառային միջոցառումների ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՆՏԱՌԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

1. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Անտառների վերականգնման, պահպանման և ռացիոնալ օգտագործման ուղիները բազմազան են: Անտառի բնական վերականգնումը կատարվում է սերմային և վեգետատիվ ճանապարհով: Սերմերով բազմացումը համարվում է անտառի վերականգնման հիմնական եղանակը: Սերմերով բնական վերականգնման հաջողությունն անտառում պայմանավորված է ինչպես սերմերի քանակով, որակով, այնպես էլ նրանց ծլման և հետագա աճն ապահովող պայմաններով:

Ծրագրի նպատակն է պետական անտառային ֆոնդի տարածքներում, ընտրելով առանձին զանգվածներ և իրականացնելով անտառի բնական վերականգնման օժանդակման միջոցառումներ, ստեղծել բարենպաստ պայմաններ սերմերի ծլման, աճի և զարգացման համար, որոնք ուղղված կլինեն անտառի սերմային բնական վերականգնմանը:

2. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ընտրված անտառային զանգվածներում հիմնականում կկիրառվեն կոպիտ թաղիքի և հողի փխրեցում, ենթանտառի նոսրացում, միաժամանակ կիրականացվեն անտառների ինքնավերականգնմանը նպաստող այլ աշխատանքներ:

Նշված միջոցառումների շնորհիվ զգալիորեն կնվազեն անտառում հողի մակերեսային շերտում ընկած սերմերի չորացումն ու ցրտահարումը, վնասումը միջատների կողմից և ախտահարումը հիվանդություններով: Ծրագրով նախատեսվում է 400 հա տարածքի վրա (1 հա կտրվածքով մինչև 1200 գծ. մետր հողի փխրեցում մինչև 5 սմ խորությամբ) բնական աճի աջակցում և որոշ տարածքների վրա խնամքի աշխատանքների իրականացում:

3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Անտառային միջոցառումների ծրագիրն իրականացվում է արդեն հինգերորդ տարին և կարող ենք հաստատապես ասել, որ պետական անտառային ֆոնդի հատատեղերում, ինչպես նաև անտառի սաղարթի տակ արդեն ունենք երիտասարդ (մատղաշ) ծառեր, իսկ ծրագրի շարունակական իրականացումն ապահովում է դրանց թվաքանակի աստիճանական ավելացումը: Քանի որ անտառի սերմային բնական վերականգնումը ակնկալում է պետական անտառային ֆոնդում երիտասարդ ծառերի աստիճանական ավելացում, ուստի ապագայում կապահովվի անտառների էկոլոգիական, միջավայրաստեղծ, հողապաշտպան, ջրակուտակիչ, սանիտարահիգիենիկ և առողջապահական դերը: Բացի այդ, ծրագրի իրականացումը հնարավորություն կտա տարեկան ստանալ ավելի քան 100 (հարյուր) հազար որակյալ անտառակազմող հիմնական (հացենու, լորենու, կաղնու, թխկենու, հաճարենու) տեսակի տնկիներ:

4. ՊԱՅԱՆՋՎՈՂ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ

Անտառային միջոցառումների իրականացման համար պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 4.800.0 հազար դրամ, որն իր մեջ ներառում է անտառային ֆոնդի 400 հա բնական աճի աջակցում: